

ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ
STUDI LINGUISTICI

ՕՏԱՐ ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ
ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ
ՄԱՍՆ Զ.
ԻՏԱԼԵՐԷՆ ԵՒ ՍՊԱՆԵՐԷՆ

Ներկայ յօդուածով շարունակում ենք օտար լեզուների տառադարձութեան կանոնները լուսաբանող յօդուածաշարքը¹, որի սոյն՝ վեցերորդ մասը, նուիրում ենք իտալերէնի եւ սպաներէնի յատուկ անուններին:

Ինչպէս չարքի նախորդ յօդուածներում, այստեղ վերանայելու ենք գոյութիւն ունեցող իրավիճակը, փորձելու ենք գիտական հիմքերի վրայ դնել այս երկու լեզուների տառադարձութիւնը եւ քննութեան ենթարկել դրանց մի շարք նրբութիւններ: Մեր այս մօտեցումը նպատակ ունի նաեւ մասնագէտ հասարակութեան ուշադրութիւնը սեւեռել խնդրի վրայ՝ հայերէնի տառադարձութիւնը միասնականացնելու մտահոգութեամբ:

Յօդուածները չծանրաբեռնելու եւ միեւնոյն բանը մի քանի անգամ չկրկնելու համար՝ յօդուածների նախաբաններն ու ամփոփումները լինելու են հակիրճ: Այդու ամենայնիւ, մեր ձեռնարկութեան տեսական գաղափարներին ծանօթանալու համար,

1 Տե՛ս ՄԻՔԱՅԼԷԱՆ, Ա., Օտար Յատուկ Անունների Տառադարձութեան Սկզբունքները (Մասն Ա. – մերձաւորարեւելեան լեզուներ), ի «Հայկագեան Հայագիտական Հանդէս», 40 (2020), 341-364: Նոյն, Օտար Յատուկ Անունների Տառադարձութեան Սկզբունքները (Մասն Բ. – դասական լեզուներ, հին յունարէն եւ լատիներէն), ի «Բագմավէպ», ՃԾԸ (2020), քիւ 1-2, 304-336: Նոյն, Օտար Յատուկ Անունների Տառադարձութեան Սկզբունքները (Մասն Գ. – ֆրանսերէն), ի «Հայկագեան Հայագիտական Հանդէս», 41 (2021), 443-466: Նոյն, Օտար Յատուկ Անունների Տառադարձութեան Սկզբունքները (Մասն Դ. – անգլերէն), ի «Հանդէս Ամսօրեայ», ՃԼԵ (2021), 197-246: Նոյն հեղինակի, Օտար Յատուկ Անունների Տառադարձութեան Սկզբունքները (Մասն Ե. – գերմաներէն), ի «Բագմավէպ», ՃԶ (2022), քիւ 1-2, 273-299:

ընթերցողին հրաւիրում ենք աչքի անցկացնել նախորդ (մասնա-
ւորապէս՝ առաջին երեք) յօդուածների նախաբանները, տեսական
մասերն ու ամփոփումները:

Իտալերէնն ու սպաներէնը ներառել ենք միեւնոյն յօդուա-
ծի մէջ: Թէեւ նրանցից ամէն մէկն ունի իրեն յատուկ հնչիւնա-
կարգ, երկու լեզուները ոչ միայն ծագումնաբանօրէն են մերձա-
կից (երկուսն էլ լատիներէնի անմիջական զուտրերն են), այլեւ
ունեն հնչիւնա(բանա)կան բազմաթիւ զուգահեռներ: Այդ պատ-
ճառով սրանց տառադարձութեանը գերադասել ենք իրար նման
սկզբունքներով մօտենալ:

Ընդգծենք, որ սպաներէնն ու մանաւանդ իտալերէնը ունեն
հնչիւնային բաւական պարզ համակարգ, որով տառադարձու-
թեան մեր խնդիրը անհամեմատ դիւրանում է՝ անգլերէնի,
ֆրանսերէնի, ռուսերէնի կամ նոյնիսկ գերմաներէնի կողքին:

Հայաստանի Տերմինաբանական կոմիտէ (Եզրաբանական
յանձնաժողով) կամ Լեզուի պետական տեսչութիւն անունը կրող
զանազան մարմինները, աւաղ, քիչ ուշադրութիւն են դարձրել
այս երկու լեզուներին՝ իրենց ուշադրութեան կենտրոնում ունե-
նալով յատկապէս ռուսերէնից, աւելի հազուադէպ՝ անգլերէնից
փոխ առած յունալատինական եզրոյթները²:

Ի սկզբանէ եւեթ ցանկանում ենք մեր դիրքորոշումն ար-
տայայտել արեւմտահայերէնի «սպաներէն» եւ սովետահայերէնի³
«իսպաներէն» գոյգ ձեւերի վերաբերեալ, որոնցից մենք նախընտ-
րում ենք առաջինը՝ իբրեւ Ե. դարից աւանդուած հարազատ ձեւ:

Յիրաւի՝ «Սպանիա» ձեւը աւանդուած է տակաւին Նոր Կը-
տակարանում (Թուղթ առ Հռովմայեցիս, Ժե, 24/28)⁴ եւ այսօր

2 Տե՛ս Տերմինաբանական եւ ուղղագրական տեղեկատու (1956-2006), Խմբ.
ԲԱՐՍԵՂԵԱՆ, Հ. Խ., «9-րդ հրաշալիք», Երեւան 2006:

3 «Սովետահայերէն» ասելով նկատի ունենմ արեւելահայերէնի՝ 1920-30ա-
կան թուականներից Հայաստանում հաստատուած մի լեզուավիճակը, որ
մինչեւ 1990ականներին ռուսերէնի անմիջական, իսկ այժմ՝ աւանդական
ազդեցութեան տակ է եղել եւ է: Խօսքը ոչ միայն (եւ այնքան) ուղ-
ղագրութեան, որքան բառապաշարի ու շարահիւսակաւն օտարաբանու-
թիւններով յագեցած շինածոյ եւ հայերէնի հարազատ տարրերին խորք-
լեզուի մասին է (առաւելապէս տարածուած վարչական, հրապարա-
կախօսական եւ իրաւաբանական խօսքի ու գրականութեան մէջ):

4 Վերջին տասնամեակների արեւելահայերէն թարգմանութիւնների մէջ,
ցաօօք, այն փոխարինել են «Իսպանիա» ձեւի (տե՛ս օրինակ՝ Նոր Կտա-
կարան (արեւելահայերէն մոր թարգմանութիւն համեմատութեամբ յու-
նարէն բնագրերի), Մայր Աթոռ Ս. Էջմիածին 1975, 443-444):

միակ պաշտօնական ձեւն է արեւմտահայերէնում: Մալխասեանցի (արեւելահայերէն) բառարանը ունի «սպանիացի», «սպանիական» («սպանական»ը յղում է սրան) եւ «սպաներէն» յօդուածները, որոնք երեքն էլ խօսում են Սպանիայի՝ որպէս երկրի մասին: «Իսպան» արմատով եւ ոչ մի ձեւ չկայ: Հայաստանի Ակադեմիայի Լեզուի ինստիտուտի 1969-80 թուականների եւ էդ. Աղա-յեանի 1976 թուականի բառարանները «սպան» ձեւերից յղում են արդէն «իսպան» ձեւերին⁵:

Տողերիս հեղինակը մի ժամանակ կարծում էր, թէ արեւմրտահայերէնի «սպան» ձեւերը իտալերէնի Spagna տարբերակի ազդեցութեամբ են, եւ հակուած էր ճիշտը համարել «հիսպան» արմատը իբրեւ լատիներէնի պատմական Hispania անունն տա-ռադարձութիւն: Սակայն երբ համոզուեցինք, որ հայերէնի «Սպանիա»ն տակաւին ոսկեդարեան վկայութիւն ունի, աներկբա-յօրէն ընդունեցինք աւանդական այս ձեւը: Այդպիսին է մեր մօ-տեցումը. եթէ գոյութիւն ունեն աւանդական հաստատուած ձե-ւեր՝ դեռեւս հնուց ընդունուած ե՛ւ արեւմտահայերէնում, ե՛ւ արեւելահայերէնում, մենք հակում ենք դրանց կողմը, նոյնիսկ ե-թէ ճշգրիտ տառադարձութիւնը մեզ մի փոքր այլ ձեւ է տալիս:

Ակնյայտ է, որ «իսպան» ձեւերը ռուսերէնի ազդեցու-թեամբ են արեւելահայերէն մտել (Испания), եւ որ դրանք ո՛չ լիարժէք Հիսպանիա են, ո՛չ էլ աւանդական Սպանիա, ուստի եւ առհասարակ խոտելի⁶:

ԻՏԱԼԵՐԷՆ ԵՒ ՍՊԱՆԵՐԷՆ ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ
ՊԱՏՄԱԿԱՆ ՈՒ ԱՇԽԱՂԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Իտալերէնի ու սպաներէնի պարագայում յատկապէս պէտք է ուշադիր լինել ճիշտ որոշելու, թէ որ ժամանակաշրջանն ենք համարում լատիներէնի «աւարտը» եւ որ՝ այս նոր լեզուների

5 ՄԱԼԽԱՍԵԱՆՑ, Ս., Հայերէն բացատրական բառարան, Երեւան 1944-45: Ժամանակակից հայոց լեզուի բացատրական բառարան, Հր. Անառեանի անուն լեզուի ինստիտուտ, Երեւան 1969-1980: ԱՂԱՅԱՆ, Է. Բ., Արդի հայերէնի բացատրական բառարան, Երեւան 1976:

6 Ձեմք կարծում որ «իսպան» ձևերը մոր յունարէնից լինեն (Ισπανία): Եթէ այդպէս լինէր, այդ ձևերը մալի եւ առաջ արեւմտահայերէնում պէտք է գործածական լինէին եւ շատ աւելի վաղուց:

սկիզբը: Ընդհանուր գծերով համարում են, որ իտալերէնն ու սպաներէնը սկիզբ են առել ԺԲ.-ԺԳ. դարերից (թէեւ աւելի վաղ վկայութիւններ էլ կան): Բայց դա չի նշանակում, որ լատիներէնը այդ ժամանակ մեռել է: Ընդհակառակը՝ վերջինս դեռ երկար դարեր շարունակել է մնալ պաշտօնական գրագրութեան լեզու, իսկ նոր լեզուները լատիներէնի մշտական հօր ազդեցութեան տակ են եղել: Արդ՝ ո՛ր դարից սկսած պէտք է համարենք, որ անունների տառադարձութիւնը պէտք է լինի արդէն նոր լեզուներից եւ ոչ թէ լատիներէնից: Սա մի հարց է որ, ինչպէս եւ շատ այլ լեզուների պարագայում, պէտք է դրուի մասնագիտական քննութեան:

Լատիներէն / իտալերէն / սպաներէն տարազանումը նաեւ նրանով է կարեւոր, որ հայերէնի տառադարձութիւնը որոշ դէպքերում այլ մօտեցում ունի լատիներէնի նկատմամբ (տարբերութիւնները շատ չեն, բայց երբեմն ակնառու են):

Սպաներէնը միջնորդ (տարանցիկ) լեզու է լատինական Ամերիկայի երկրների մեծ մասի, ինչպէս նաեւ Ամերիկայի հընդկացիական լեզուներից սերող անունները տառադարձելու համար: Նրա աշխարհագրական տարածքը խիստ ընդարձակ է:

Ամերիկայի Միացեալ Նահանգների մի մասի տարածքում սպաներէնն առաջնութիւն ունի նաեւ անգլերէնի նկատմամբ (խօսքը տառադարձութեան մասին է): Պատմականօրէն՝ նախ Նոր Սպանիայի փոխարքայութեան, այնուհետեւ Մեքսիկայի անկախ պետութեան իշխանութիւնը տարածւում էր հսկայածաւալ հողերի վրայ, եւ սպաներէնն է, որ ստեղծել կամ մեզ է աւանդել բազմաթիւ տեղանուններ: ԱՄՆի Կալիֆորնիա, Արիզոնա/Արիսոնա, Նեւադա, Նոր Մեքսիկո/Մեքսիկա, Կոլորադո, Յուտա (սպաներէն նախնական ձեւը՝ Yuta), Տեխաս ու Ֆլորիդա նահանգները այդ տարածքների մէջ են: Անհրաժեշտ է այստեղ նրբութիւն ցուցաբերել եւ ճիշտ ընտրել աղբիւր լեզուն (անգլերէն, սպաներէն, ֆրանսերէն...):

Ի հակառակէն՝ Իբերական թերակղզու ոչ բոլոր լեզուներն են «պաշտօնական սպաներէն»ից տառադարձելի: Օրինակ՝ Կատալոնիայի եւ Բասկերի երկրի տեղանուններն ու անձնանունները գերադասում ենք տեսնել կատալոներէն եւ բասկերէն (եթէ մեր լեզուաբանութիւնը ի վիճակի լինի այդ լեզուների մասնագէտներ պատրաստել):

Աղբիւր լեզուի ընտրութեան հարցը միշտ չէ որ յստակ է, եւ տառադարձողը պէտք է գոնէ տարրական գիտելիքներ ունենայ անունների ու անձերի վերաբերեալ (պատմութիւն, աշխարհագրութիւն, ազգային պատկանելութիւն, մայրենի լեզու...):

ՀԱՅԵՐԷՆ ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ ՀՆՁԻՒՆԱԿԱՆ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐԸ

Ինչպէս արդէն քանիցս խօսել ենք, հայերէնի հնչիւնաբանութիւնն ու ուղղագրութիւնը ունեն սկզբունքներ, որոնք անհրաժեշտ է կիրարկել իւրաքանչիւր լեզուից կատարելիք տառադարձութեան ժամանակ: Յիշեցման համար՝ ստորեւ ամփոփ ներկայացնում ենք հայերէն տառադարձութեան՝ մեր առաջին երեք յօդուածներում արծարծած սկզբունքները: Յօդուածները չծանրաբեռնելու համար մանրամասները չենք կրկնում, եւ ընթերցողին հրաւիրում ենք, նախքան որեւէ լեզուի տառադարձութեան անդրադառնալը, անպայման ծանօթանալ այդ սկզբունքներին, առանց որոնց դժուար է ըմբռնել մեր տեսակէտները:

ա. Պայթական («բ-պ-փ», «գ-կ-ք», «դ-տ-թ») եւ պայթաչփական («ջ-ճ-չ», «ն-ժ-ց») բաղաձայնների եռաստիճան կարգը հայկաբան տառադարձութեան ողնասիւններից մէկն է:

բ. Տառադարձութիւններում «է»ն գրում ենք միայն բառավերջին, կամ այլուր՝ ձայնաւորից առաջ: «Ե»ը հայերէնի [e] հնչոյթն է եւ այն գրում ենք մնացած դիրքերում՝ բառամիջում թէ բառասկզբին (բաղաձայններից առաջ): Բառասկզբի «է»ը պարտադիր չէ [յե] արտասանել. օտար անունների մեծ մասում այն գերադասելի է իր մաքուր հնչումով՝ [e] արտասանել:

գ. Օտար [o] հնչիւնը տառադարձութիւնների մէջ ամէնուր արտայայտում ենք մեսրոպեան «ո» տառով: Բառասկզբին, ինչպէս եւ «ե»ի պարագայում, պարտադիր չէ «ո»ն [վո] ընթերցել: Կիլիկեան ժամանակներից մուտք գործած կլոր «օ» տառը տառադարձութեան համար չէ:

դ. Բառամիջում եւ բառավերջին խոսափում ենք «ը» գրելուց:

ե. Օտար [v] (նաեւ [w]) հնչիւնը հայերէն արտայայտում ենք «վ, լ, ու» տառերից⁷ մէկով, ըստ հայոց դասական ուղղագրութեան կանոնների: Բառասկզբում գրում ենք միմիայն «վ»: Ըստ հնարաւորութեան՝ օգտագործում ենք հայերէնի «աւ, եւ,

7 Բնականաբար՝ «ու»ն պայմանականօրէն եմք տառ կոչում:

իւ» երկբարբառները: Բառամիջում՝ բաղաձայնից յետոյ եւ ձայնաւորից առաջ, գերադասում ենք գրել (այնտեղ ուր դա թոյլ է տալիս ստուգաբանութիւնը) «ու»:

գ. Օտար «ia (ja), ie (je), ii (ji), io (jo), iu (ju)» համակցութիւնները արտայայտում ենք բառասկզբին «յա, յե, յի, յո, յու» կապակցութիւններով, բառամիջում՝ «իա, իե, ի (կրկնակ «իի»ն պարզւում է), իո, իու» (եւ ոչ թէ մեր երկբարբառներով): Բառասկզբի «յ» տառի արտասանութիւնը անհրաժեշտաբար [h] չէ: Աւանդական անուններում այն [h] է հնչում, սակայն նոր տառադարձութիւնների մէջ այն պէտք է իր ձայնով՝ [j] արտասանենք:

է. Հայերէնի երկբարբառներն ու եռաբարբառներն են. «այ, ոյ, աւ (ո), եւ, իւ, եա, լո, եայ, եաւ (եո), լոյ»: Որեւէ տառադարձութեան ժամանակ կարելոր է յարգել սրանց գրութեան կանոնները եւ չյօրինել նոր կապակցութիւններ:

ը. Նոր լեզուների տառադարձութիւնների մէջ օտար [r] հնչիւնը ամէնուր գրում ենք «ր», բացառութեամբ բառասկզբի, ուր գրում ենք «ռ»: «Ռ»ի գրութիւնը «ն»ից եւ «լ»ից առաջ պարտադիր չէ⁸:

Այսօր փաստօրէն ունենք տառադարձութեան երեք սկզբունք՝ մեսրոպեան կամ հայկաբան, կիլիկեան (կամ երբեմն՝ արեւմտահայ, սիւլեւքահայ) եւ սովետահայ (կամ հայաստանեան) սկզբունքները: Մենք դէմ ենք ե՛ւ սովետահայ, ե՛ւ կիլիկեան տառադարձութիւններին: Նրանք մի կողմից՝ օտար լեզուների ազդեցութեան, միւս կողմից՝ մեսրոպեան կանոնները զանց առնելու հետեւանք են: Աւելորդ չենք համարում կրկնել, որ օտար լեզուներին յարմարուելու փորձերը կերպարանափոխում են հայերէնը եւ ոտնակոխ են անում մայրենին ամրապնդելու ու միասնական լեզու շինելու ջանքերը:

ԻՏԱԼԵՐԷՆԻ ԵՒ ՍՊԱՆԵՐԷՆԻ ՀՆՁՈՅԹՆԵՐՆ ՈՒ ՀՆՁԻՒՆՆԵՐԸ

Իտալերէնի եւ սպաներէնի պարագայում (ի տարբերութիւն, օրինակ՝ անգլերէնի կամ ֆրանսերէնի), տառադարձութեան ելակէտ ենք ընդունում գրութիւնը, այն բնականաբար հնարաւորինս ճշտելով կենդանի հնչողութեամբ ու ստուգաբա-

8 Հիմնարար այս սկզբունքների մասին աւելի մանրամասն տե՛ս մեր առաջին երեք յօդուածների համաձայն քաթիններում (Հայերէն տառադարձութեան հնչիւնա(բան)ական սկզբունքները):

նույնությամբ: *Դա անուամ էնք ոչ միայն այն պատճառով որ այս երկու լեզուների գրութիւնը շատ մօտ է արտասանութեանը, այլ նաեւ ստուգաբանական ու գործնական նկատառումներով:*

Ըստ այդմ՝ այստեղ բերում ենք Հնչիւնաբանութեան Միջազգային Ընկերութեան (API⁹) այբուբենի միայն այն նշանագրերը, որոնք անհրաժեշտ են սպաներէնի հնչիւնաբանութիւնը ճիշտ արտայայտելու համար (մնացած հնչիւնները համարժէք են լատինական տառերին կամ էլ կարելի է հայերէն տառերով արտայայտել): Հնչոյթի կամ հնչիւնի¹⁰ նշանը ընդունուած է դնել անկիւնաւոր փակագծերի մէջ, իսկ տառ արտայայտելու համար նշանագիրը դնում ենք չակերտների մէջ՝ «ա», «բ», «գ» եւ այլն:

Սպաներէնի պարագայում պէտք է առանձնացնենք հետեւեալ հնչիւնները. ա) API [β], թոյլ [p], արտասանելիս չրթունքները իրար չեն կպչում, նման է հին հայերէն [ւ] (չրթնաչրթնային [վ]) հնչիւնին. բ) API [ð], միջատամնային [q], ինչպէս անգլերէն this բառի մէջ. գ) API [θ], միջատամնային [ս], ինչպէս անգլերէն theatre բառի մէջ. դ) API [γ], թոյլ [q], լեզուի մէջքը (յետին մասը) չի կպչում քիմքին, կարծես հայերէն թոյլ [ղ] լինի. ե) API [w], անգլերէնի նման, հին հայերէն [ւ] (չրթնաչրթնային [վ]): Այս վերջինն ու առաջինը (թոյլ [p]ն) իրար չատ նման են հնչողութեամբ, թէեւ համարւում են տարբեր հնչոյթներ. առաջինը [p]ի թուլացած տեսակն է, վերջինը՝ [ռ] ձայնաւորի բաղաձայնացած (կիսաձայնացած) տեսակը:

ԻՏԱԼԵՐԷՆԻՑ ԵՒ ՍՊԱՆԵՐԷՆԻՑ ՏԱՌԱԴԱՐՁԵԼՈՒ

ԿԱՆՈՆՆԵՐ ԵՒ ՆՐՔՈՒԹԻՒՆՆԵՐ

Իտալերէնն ունի 30 պարզ հնչոյթ (երկբարբառները չհաշուած)՝ 7 ձայնաւոր, 2 կիսաձայն, 21 բաղաձայն: Չենք հաշուում հնչոյթների տարատեսակները:

9 Association phonétique internationale, Հնչիւնաբանութեան Միջազգային Ընկերութիւն, որի հնչական «այբուբենով» է ընդունուած գրի առնել գաւազան լեզուների հնչոյթները: Միջազգայնորէն ընդունուած է կա՛մ ֆրանսերէն (API), կա՛մ անգլերէն (IPA) յապաւումը:

10 «Հնչոյթ» եւ «հնչիւն» եզրոյթների տարբերութիւնը քաջ յայտնի է լեզուաբանութեանը: ՊԵՏՐՈՍԵԱՆ, Հ. Զ. – ԳԱԼՍԵԱՆ, Ս. Ա. – ՂԱՐԱԳԻՒԼԵԱՆ, Թ. Ա., *Լեզուաբանական քառարան*, Հայկական ՍՍՀ Գիտութիւնների Ակադեմիայ, Երեւան 1975:

Սպաներէնի համար կարելի է առանձնացնել 25 պարզ հըն-
չոյթ՝ 5 ձայնաւոր, 2 կիսաձայն, 18 բաղաձայն: Ընդգծում ենք՝
հնչոյթ եւ ոչ թէ հնչիւն կամ ենթահնչիւն. սրանց թիւը սպա-
նագիտութեան մէջ բաւական տարբեր կարող է լինել զանազան
լեզուաբանների գործերում:

Հայերէնն ունի 36 պարզ հնչոյթ՝ 6 ձայնաւոր, 1 կիսաձայն,
29 բաղաձայն:

Ստորեւ անդրադառնում ենք իտալերէն ու սպաներէն տա-
ռադարձութիւնների գլխաւոր կանոններին ու նրբութիւններին:

ա) Իտալերէնի եւ սպաներէնի ձայնաւորները

Իտալերէնի եւ սպաներէնի ձայնաւորները գրեթէ նոյնն են
եւ բաւական պարզ. [a], [e], [i], [o], [u]: Տառադարձում ենք հա-
մապատասխանաբար «ա, ե/է, ի, ո, ու» («ե/է» զոյգը, ինչպէս
միշտ, ըստ հայկաբան ուղղագրութեան):

Իտալերէնն ու սպաներէնը չունեն հայերէնի [ը] հնչիւնը:

Իտալերէնի «e» եւ «o» ձայնաւորները կարող են լինել
«բաց» (լայն արտասանութիւն) կամ «փակ» (նեղ արտասանու-
թիւն): Այդ պատճառով է, որ իտալերէնում հաշուում են եօթ
ձայնաւոր: Հայերէնը չունի այդպիսի տարբերակում եւ բոլոր
ղէպքերում դրանք միեւնոյն տառով ենք տառադարձում:

Օրինակներ իտալերէն. Apulia Ապուլիա, Ancona Անկոնա, Asti
Աստի, Emilia Եմիլիա, Ercolano Երկոլանո, Imola Իմոլա, Italo Իտալո,
Olbia Ուրբիա, Ondina Ունդինա, Umbria Ումբրիա, Udine Ուդինէ:

Օրինակներ սպաներէն. Almería Ալմերիա, Aragón Արագոն,
Alarcón Ալարկոն, Emilia Եմիլիա, Elda Ելդա, Espósito Եսպոսիտո, Irún Ի-
րուն, Inés Ինէս, Ibagué Իբագէ, Orense Օրենսէ, María Orán Օրան, Olmedo
Ուլմեդո, Utrera Ուտրերա, Miguel de Unamuno Ունամունո, Uribia Ուրի-
բիա:

բ) Զայնաւոր եւ կիսաձայն արտասանութիւն «i/y» տառերի

Երբ այս տառերը ձայնաւոր են («y»-ը միայն սպաներէնում
է գործածական), տառադարձում ենք «ի». սպաներէն՝ Yglesias Իգ-

լեսիաս (աւանդական գրութիւնն է, օր․՝ Rafael Yglesias Castro), Ybarra Իբարա, իտալերէն՝ Lucia Լուչիա:

Սակայն նոյն տառերը կարող են արտայայտել եւ կիսաձայն [յ] հնչիւնը: Այդ դէպքում գրում ենք «յ» կամ «ի» (ըստ հայկաբան սկզբունքների, տե՛ս վերը):

Օրինակներ իտալերէն. Chiara Կիարա, Viviana Վիւիանա, Raineri Ռանիերի, Siena Սիենա, Antonio Անտոնիո, Emilio Եմիլիո, Fiumicino Ֆիումիչինո:

Օրինակներ սպաներէն. Yucatán Յուկատան, Yopal Յոպալ, Agustín Díaz Yanes Յանես, Santiago Սանտիագո, Gracia Գրասիա, Óscar Arias Արիաս, Diego Դիեգո, Javier Խաւիեր, Julio Խուլիո, Benicio Բենիսիո, Ciudad Real Սիուդադ Ռեալ, Jiutepec Խիուտեպեկ (նկատեցէ՛ք որ չենք գրում «Սիւ-, Խիւ-»):

Հայերէնի տառադարձութեան մէջ աւանդոյթ է օտար ձայնաւորին յաջորդող «i» տառը արտայայտել «ի»ով (եւ ոչ «յ»ով), այսպէս՝ Traianus կայսեր անունը (այլ գրութեամբ՝ Trajanus, գլխագիր հին գրելաձեւը՝ TRAIANVS) աւանդաբար տառադարձել ենք Տրայիանոս: Այստեղ «i»ն արտայայտուած է «ի»ով, իսկ «յ» տառը դրած է այն պատճառով, որ հայերէն «ա»ին մի այլ ձայնաւոր յաջորդելիս պէտք է «ա»ից յետոյ «յ» գրենք: Նմանապէս ունենք GAIUS Գայիոս, նաեւ՝ «Գայիանէ» ձեւը (լատիներէն «GAIANA»ից՝ յունարէնի իգական սեռի «է» վերջաւորութեամբ), որոնք նոյն տրամաբանութեանն են հետեւում. «i»ն՝ «ի», «ա»ից յետոյ՝ յաւելեալ «յ»:

Սովետական ուղղագրութիւնը ջնջել է «ի»ն. Տրայանոս, Գայոս, Գայանէ:

Սկզբունքօրէն երկու մօտեցում կարող է լինել նոր լեզուների համար, մէկը՝ «յի»ով, միւսը՝ «յ»ով: Marcello Masroïanni կարող ենք գրել կա՛մ Մաստրոյիանի, կա՛մ Մաստրոյանի: Հարցը բաց է:

Այլ օրինակներ. Maiano Մայիանո / Մայանո, Pollaiolo Պոլայիոլո / Պոլայոլո, Mannoia Մանոյիա / Մանոյա, Pistoia Պիստոյիա / Պիստոյա («eia, eio, eiu, uia, uio, uiu» եւ այլ նման ձեւերի չհանդիպեցինք. միւս ձայնաւորներից յետոյ հայերէնում բնականաբար «յ» չենք գրի): Այստեղ պարզորոշ երեւում է, որ քաղաքների անունների վերջաւորութիւնները «յա»ով գրելը (փոխանակ «իա»ի) ինչ-որ տեղ տհաճ է եւ անսովոր:

Սպաներէն ունենք. Goya, Loyola, Leopoldo Minaya, Juan Antonio Bayona, Boyacá: *Սրանց համար աւելի սպասելի են* Գոյա, Լոյոլա, Մինայա, Բայոնա, Բոյակա *ձեւերը: Արժէ խորհել:*

գ) «Ս» տառի կիսաձայն հնչումը եւ տառադարձութիւնը

Բաղաձայնի եւ ձայնաւորի միջեւ (ե՛ւ իտալերէնում, ե՛ւ սպաներէնում) «Ս» տառը վերածւում է կիսաձայն [w] հնչիւնի: Այն տառադարձում ենք հայերէն «ու»: Ինչ վերաբերում է հայերէնի արտասանութեանը, ապա հնարաւոր է ե՛ւ [ու], ե՛ւ [վ] արտասանութիւն: Մենք նախընտրում ենք սովորաբար բաղաձայն [վ] արտասանութիւնը, քանզի նախ՝ կիսաձայնի տեղակ աւելի ճիշտ է հնչեցնել բաղաձայն քան ձայնաւոր հնչիւն, եւ երկրորդ, որ [վ] հնչումը համահնչիւն է նաեւ լատիներէնից եկող անունների արտասանութեանը հայերէնում, մի բան որ միաւորում է լատիներէն-իտալերէն-սպաներէն եռեակը: Uruguay Ուրուգուայ, Paraguay Պարագուայ, Guatemala Գուատեմալա անունները արտասանում ենք [վ]ով: Սակայն կանոնը, ինչ խօսք, համընդհանուր չէ, օրինակ՝ Venezuela Վենեսուէլա [ու] հնչմամբ է), եւ չափ տեղերում բաղաձայն [վ] հնչումը խիստ անսովոր է, մանաւանդ՝ ուրոչ բաղաձայններից յետոյ (տե՛ս ստորեւ):

Օրինակներ իտալերէն. Eduardo Եդուարդո [վ/ու], Guarino Guarini Գուարինո Գուարինի [վ/ու], Guercino Գուերչինո [վ/ու], Luigi Լուիջի [ու], Guido Գուիդո [վ/ու]:

Օրինակներ սպաներէն. Buenos Aires Բուենոս Այրես [ու], Ecuador Եկուադոր [վ/ու], Cuenca Կուենկա [վ/ու], Lola Dueñas Դուենիաս [ու], Carlos Fuentes Ֆուենտես [ու], Guadalquivir Գուադալկիւիր [վ/ու], Juan Խուան [ու], Guanajuato Գուանախուատո [վ/ու], Irapuato Իրապուատո [վ/ու], Puebla Պուէրլա [ու], Monica Puig Պուիգ [ու], Teruel Տերուել [վ/ու], Consuelos Կոնսուելոս [վ/ու]:

Լինում են դէպքեր, երբ գերադասելի է երկբարբառը վերածել միաբարբառի: Այսպէս՝ Puerto Rico, աւանդաբար՝ Պուերտո Ռիկո, բայց գուցէ աւելի լաւ է Պորտո Ռիկո, ինչպէս իտալերէնն է, պորտուգալերէնը, ֆրանսերէնը: Կամ՝ Duomo (լատիներէն «domus» բառից), աւելի կիրթ կը լինէր գրել Դոմո (նոյնիսկ՝ Դոմ, տե՛ս ստորեւ բառավերջի ձայնաւորների համար): Այստեղ արդէն պարզ տառադարձութիւն չէ, այլ ինչ-որ տեղ՝ հայադարձութիւն:

դ) Լատիներէնից ժառանգած երկրաբառներ

Իտալերէնն ու սպաներէնը լատիներէնից ժառանգել են «AU» եւ «EU» երկրարբառները: Ինչպէս նախորդ կէտում, այստեղ նոյնպէս գործ ունենք [w] կիսաձայնի հետ (համապատասխան հայերէն «ւ» տառի հին հնչումին): Ըստ այդմ՝ դրանք տառադարձում ենք մեր «աւ» եւ «եւ» երկրարբառներով (եւ ոչ թէ «աու» եւ «եու»)՝¹¹:

Լատիներէնի «AE» եւ «OE» երկրարբառները (վերջինս աւելի յունական ծագում ունի եւ հագուադէպ է լատիներէնում) իտալերէնում եւ սպաներէնում պարզուել են, եւ այսօր երկու լեզուներն էլ երկուսի փոխարէն գրում են «e»: Հայերէն այն տրամաբանօրէն դառնում է «ե/է», որ համահունչ է նաեւ լատիներէնի տառադարձութեանը (տե՛ս յօդուածաշարքի Բ. մասը):

Օրինակներ իտալերէն. Claudia Կլաւդիա, Laurana Լաւրանա, Maurizio Մաւրիցիո, Augusto Աւգուստո, Aurora Աւրորա, Eugenio Եւջենիո, Eustachi Եւստակի, Cesare (յատ. Caesar) Չեզարե, Emilio (յատ. Aemilius) Եմիլիո, Edipo (յունալատ. Oedipus) Եդիպո (երբ սովորական արական անուան մասին է խօսքը): Սակայն՝ Antonio Meucci Մէուչի (քանզի այստեղ երկրարբառ չէ):

Օրինակներ սպաներէն. Carmen Maura Մաւրա, Carlos Saura Սաւրա, Caucasia Կաւկասիա (քաղաք Կոլումբիայում), Cuautitlán Կուաւտիտլան, San Baudilio de Llobregat Սան Բաւդիլիո դէ Լիոբրեգատ, Eugenio Եւխենիո, Ceuta Սեւտա, Reus Ռեւս, Neuquén Նեւկեն:

ե) Իտալերէնի եւ սպաներէնի բաղաձայնները

Իտալերէնի եւ սպաներէնի բաղաձայնների մի մասը միեւնոյն տառադարձութեանն ենք ենթարկում (իբրեւ հնչոյթներ նըրանք նոյնն են): Դրանք են. B «բ», P «պ», D «դ», T «տ», V «վ/ւու», F «ֆ», L «լ», R «ր/ռ», M «մ», N «ն»: Տե՛ս նաեւ յաւելուածում բերած ամփոփիչ աղիւսակը:

Այնու ամենայնիւ՝ բաղաձայնների մի զգալի մասը մեկնաբանութեան կարիք ունի: Մանրամասները՝ ստորեւ:

Օրինակներ վերը նշած բաղաձայնների. իտալերէն. Bruno Բրունո, Bari Բարի, Patrizia Պատրիցիա, Pescara Պեսկարա, Dino Դինո,

¹¹ Սրա մասին մեզմ մանրամասն խօսել եմք անգլերէնի եւ գերմաներէնի շուրջ (տե՛ս յօդուածաշարքի Դ. եւ Ե. մասերը):

Donatello Դոնատելո, Terni Տերնի, Trapani Տրապանի, Verona Վերոնա, Viareggio Վիարենջո, Tivoli Տիվոլի, Foggia Ֆոջա, Forlì Ֆորլի, Lombardia Լոմբարդիա, Liguria Լիգուրիա, Rossi Ռոսի, Romeo Ռոմեո, Capri Կապրի, Andria Անդրիա, Marsala Մարսալա, Melia Մելիա, Niccolò Նիկոլո, Nono Նոնո:

Սպաներեն օրինակներ. Bogotá Բոգոտա, Bolívar Բոլիվար, Veracruz Վերակրուս, Vitoria Վիտորիա («B»ի եւ «V»ի համար տե՛ս նաեւ ստորեւ), Palencia Պալենսիա, Paraná Պարանա, Domínguez Դոմինգես, Dolores Դոլորես, Tarrasa Տարասա, Toledo Տոլեդո, Ferrol Ֆերոլ, Fernando Ֆերնանդո, León Լեոն, López Լոպես, Río Bravo Ռիո Բրաւո, Rodrigo Ռոդրիգո, Miranda Միրանդա, Miguel Միգել, Nicaragua Նիկարագուա, Navidad Նաւիդադ:

գ) Սպաներէնի «b» եւ «v» տառերը

Այսօր սրանք նոյն հնչուժն ունեն եւ իրենց նոյն կերպ են պահում զանազան դիրքերում. բառասկզբին եւ դադարից ու [վ] հնչիւնից առաջ հնչում են լիարժէք [p], այլ դիրքերում՝ թոյլ [p] (API [β]): Սակայն պատմականօրէն (ստուգաբանօրէն) «b» տառը համապատասխանում է «p»ին, իսկ «v»ն՝ «վ»ին: Սպաներէնը երկար դարեր պահպանել էր դրանց հնչողութեան տարբերութիւնը եւ այժմ էլ գիտակցում է ամէն տառի ծագումը, օրինակ՝ մի կողմից՝ biblioteca, biología, bomba, brigada, միւս կողմից՝ vaso, Venus, vertical, vino (թէեւ բոլոր այս բառերի սկզբում հնչում է [p]): Ուստի տրամաբանական է դրանց պատմական տառադարձումը՝ «b»ն «p» եւ «v»ն՝ «վ/ու»:

Այլ օրինակներ. Burgos Բուրգոս, Buenaventura Բուենաւենտուրա, Bolivia Բոլիւիա, Buenavista Բուենաւիստա, Ciudad Victoria Սիուդադ Վիկտորիա, Víctor Jara Վիկտոր Խարա, Valladolid Վալիադոլիդ, Valencia Վալենսիա:

Անուններ կան, որ աւանդաբար այլ տառադարձում են ստացել. La Habana, Ֆրանս. La Havane, անգլ. եւ պորտ. Havana, հայերէն՝ Հաւանա:

Պէտք է զգույշ լինել Սպանիայի, Ֆրանսիայի ու Բասկերի երկրի խաչմերուկում գտնուող տեղանունների վերաբերեալ: Սպաներէնը երբեմն գրում է «V», մինչդեռ Ֆրանսերէնը (եւ բասկերէնը) կարող է «B» գրել. սպան. Vizcaya, Ֆրանս. Biscaye, բասկերէն Bizkaia (Բիսկայիա նահանգը), կամ՝ սպան. País Vasco, Ֆրանս. Pays Basque (Բասկերի երկիր):

Այսպիսի պարագաներում ենք առաւելապէս զգուժ, որ հայերէնը հնարաւորութիւն չունի ուսումնասիրելու աշխարհի բոլոր լեզուները, եւ որ անհրաժեշտաբար մի ընտրութիւն պէտք է կատարել նախօրօք:

է) Սպաներէնի «d» եւ «g» տառերի իւրայատուկ հնչումը

Նոյնպիսի՝ այն է պատմական մօտեցում ենք ցուցաբերում «d» եւ «g» տառերի նկատմամբ, որոնց կենդանի հնչումը բաւական տարբեր է գրութիւնից: Շատ դիրքերում «d»-ն հնչում է միջատամնային [q] (API [ð]), իսկ երբեմն նոյնիսկ հազիւ լսելի կամ բոլորովին համր է (օրինակ՝ բառաւերջում՝ Usted [uste^δ / ուստե՛], Madrid [maðri^δ / մադրի՛]): «G» տառի հնչումը նոյնպէս թուլանում է եւ կարող է տատանուել թոյլ [ŋ]ի եւ կիսահամր մի ձայնի միջեւ:

Տառադարձում ենք միշտ ըստ գրութեան՝ «ղ» եւ «զ» («խ»ի համար տե՛ս վարը)։ Cádiz Կադիս, Córdoba Կորդոբա¹², Granada Գրանադա, Badajoz Բադախոս, Madrid Մադրիդ, Málaga Մալագա, Zaragoza Սարագոսա, Tarragona Տարագոնա, Santiago Սանտիագո:

Ինչպէս տեսնում ենք, զանազան լեզուներից եկած միեւնոյն հնչիւնը կարող է տարբեր տառադարձութիւն ունենալ: Միջատամնային [q]ն (API [ð]) արարբերէնից տառադարձեցինք «զ»¹³, անգլերէն «th» համակցութիւնը՝ «ղ»¹⁴ եւ այժմ՝ սպաներէնի «d» տառի միջատամնային հնչումը՝ նոյնպէս «ղ»:

ը) Սպաներէնի միջատամնային API [θ] հնչումը

Սպանիայի գրական՝ կաստիլիական լեզուի արտասանութիւնն ունի միջատամնային API [θ] հնչիւն (ուղղագրութիւնը «z» կամ «c» տառերով, տե՛ս յաջորդ կէտում): Սակայն սպանախօս երկրների մեծ մասը (Լատինական Ամերիկան), ինչպէս նաեւ բոլն Սպանիայի զանազան շրջաններ (օր․՝ Կատալոնիան), չեն ճանաչում այդպիսի արտասանութիւն եւ այդ հնչիւնը արտաբերում են որպէս հայերէն պարզ [u]:

12 Այսօր՝ Կորդոբա, քէւ ստուգաբանօրէն «b» է:

13 Տե՛ս յօդուածաշարքի Ա. մասը՝ մերձաւորարեւելեան լեզուներ:

14 Տե՛ս յօդուածաշարքի Դ. մասը՝ անգլերէն:

Ամէն պարագայում տառադարձում ենք հայերէն «ս» տառով, որպիսին է ե՛լ ստուգաբանութիւնը, ե՛լ տառադարձութեան ավանդոյթը (միեւնոյն է՝ հայերէնը չունի միջատամնային այդ հնչիւնը):

Օրինակները տե՛ս յաջորդ կէտում:

թ) Համակցութիւններ «C» եւ «ց» տառերի՝ «e» եւ «i» տառերի հետ

Իտալերէնում եւ սպաներէնում՝ յատիներէն «C»¹⁵ տառը [i] եւ [e] հնչիւններից առաջ ձեռք է բերել այլ արտասանութիւն. իտալերէն՝ [չ], սպաներէն՝ միջատամնային API [θ]: Նմանապէս՝ յատիներէն «ց» տառը նոյն դիրքերում ձեռք է բերել իտալերէն [ջ], սպաներէն՝ [խ] արտասանութիւն:

Անհրաժեշտութեան դէպքում, այդպիսի հնչումից խուսափելու համար, իտալերէն ուղղագրութիւնը երկու տառերի միջեւ ներդրում է «H» տառը, իսկ սպաներէնը՝ «U»ն: Երկու լեզուներում էլ դրանք բնականաբար համը են:

Ահա մի աղիւսակ այդպիսի դէպքերի եւ դրանց հայերէն տառադարձութեան:

	Գրութիւն		Տառադարձութիւն	
	իտալերէն	սպաներէն	իտալերէնից	սպաներէնից
«C» տառի համակցութեամբ	ce, ci		չե, չի	սե, սի
	che, chi	que, qui	կե, կի	
«G» տառի համակցութեամբ	ge, gi		ջե, ջի	խե, խի
	ghe, ghi	gue, gui	գե, գի	

Օրինակներ իտալերէն. Celentano Չելենտանո, Cerletti Շերլետի, Cimarosa Չիմարոզա, Civitavecchia Չիւիտավեկիա¹⁶, Genova Ջենովա, Gela Ջելա, Girolamo Ջիրոլամո, Giglio Ջիլիո, Chechi Վեկի, Zuccherо Ջուկերո (Նաեւ Ցուկերո), Bianchi Բիանկի, Luchino Լուկինո, Bagheria

15 Անուանումը՝ *կէ* (տե՛ս յօդուածաշարքի Բ. մասը՝ դասական լեզուներ):

16 Երկրորդ բաղադրիչի առաջին տառը գերադասում ենք գրել «ւ/» (վիմեւի է անշուշտ):

Բագերիա, Brighella Բրիգելա, Righi Ռիգի, Ghirlandaio (նաեւ գրած Ghirlandajo, միեւնոյն արտասանութեամբ) Գիրլանդայ(ի)ո:

Օրինակներ սպաներէն. Cervantes Սերուանտես, Albacete Ալբասետէ, Cáceres Կասերես, San Francisco Սան Ֆրանսիսկո¹⁷, Asunción Ասունսիոն, Gerona Խերոնա, Francisco Gento Խենտո, Gijón Խիյոն, Andrés Gimeno Խիմենո, Querétaro Կերետարո, Francisco de Quevedo Կենեդո, Quito Կիտո, Benito Quinquela Martín Կիմկելա, Che Guevara Չէ Գելարա, Guecho Գէչո, Guipúzcoa Գիպուսկո(վ)ա, Jorge Guillén Գիլիեն:

Իտալերէնում լինում են դէպքեր, երբ «ci, gi» համակցութիւնների մէջ «i»ն չի հնչում (սպաներէնը չունի նման դէպքեր). cia, cio, ciu, gia, gio, giu (այստեղ «i»ն նրա համար է, որպէսզի նախորդ բաղաձայնները հնչեն [չ] եւ [ջ]): Այդպիսի դէպքերում այն պէտք չէ տառադարձել. camicia ((վերնա)շապիկ) կը լինի «կամիչա», իսկ farmacia (դեղատուն)՝ «ֆարմաչիա»: **Օրինակներ.** Coccianti Կոչանտէ, Luciano Լուչանո, Piccioni Պիչոնի, Boccioni Բոչոնի, Giacomo Զակոմո, Parmigianino Պարմիջանինո, Giorgio Զորջո, Sergio Սերջո, Giuseppe Զուգեպէ, Giulio Զուլիո:

Սպաներէնն իր կարգին գրում է «güe, güi» որպէսզի հնչեցնի [գւէ], [գւի] («ü»ն կիսաձայն հնչիւն է). Argüello Արգուելիո, Güeñes Գուենիես, Güimar Գուիմար, Güicán Գուիկան, Güigüe Գուիգուէ:

Սպաներէնը այլ դիրքերում գրում է «Z» եւ «J»: «Z»ն (API [θ]) տառադարձում ենք «ս», (միւսի համար տե՛ս ստորեւ). Zaragoza Սարագոսա, José Luis Rodríguez Zapatero Խոսէ Լուիս Ռոդրիգես Սապատերո, China Zorrilla Չինա Սորիլիա: «Zorro»ն տառադարձում են անգլերէնից՝ Զոր(ր)ո, սակայն եթէ սպաներէնից լինէր¹⁸, պէտք է գրէինք Սորո (կամ Սոռո):

ժ) Սպաներէնի «ch»ն

Սրա տառադարձումը սպաներէնում յստակօրէն եւ ամէն պարագայում «չ» է: Օրինակներ. Chile Չիլի (այլ լեզուներ ունեն Chile ձեւը, վերջին ձայնաւորը ստոյգ չէ), Chihuahua Չիւաւա (լաւագոյն տառադարձումը սա է թերեւս, հմմտ. սերբերէն Чивава,

17 Սովետահայ տառադարձութիւնը յամառօրէն գրում է Սան Ֆրանցիսկո (ռուսերէնից), մինչդեռ ն՛ւ մայր լեզուն՝ սպաներէնը, ն՛ւ անգլերէնը /ս/ով են:

18 Քանզի բառը սպաներէն է, նշանակում է «աղուէս»:

պարսկերէն چاوپاوا [չիվավա]. սովետահայ «Ձիուաուա»-ն անհետեւ-թուլթիւն է), Chiapas Զիապաս, Chávez Չաւես:

ժա) Իտալերէնի «sce, sci» համակցութիւնները

Իտալերէնն ունի նաեւ [շ] հնչիւն, որն արտայայտում են «sce, sci» համակցութիւնների միջոցով: Տառադարձում ենք «շն», «շի». Bisceglie Բիշելիէ, Crescentini Կրէշենտինի, Gramsci Գրամշի, Scimone Շիմոնէ, fascismo ֆաշիզմ:

Այն դէպքերում երբ «i»-ն համը է (scia, scie, scio, sciu)' միայն «շ» (ինչպէս եւ «C»-ի պարագայում). Brescia Բրէշա, Leonardo Sciascia Շաշա, scienza շենցա, Mogadiscio Մոգադիշո (այս տեղանունն տառադարձութիւնը իտալերէնից է), Sciuscià Շուշա (մի չարժանկարի անուն է):

ժբ) Քմային բաղաձայններ. «gli, gn» եւ «ll, ñ»

Իտալերէնն ու սպաներէնը ունեն քմայնացած (փափուկ) երկուական բաղաձայն, որ արտայայտում են «gli», «gn» (իտալերէնում) եւ «ll», «ñ» (սպաներէնում) նշանադրերով: Թէեւ հայերէնը չունի քմային բաղաձայններ, այս պարագայում տառադարձութեան աւանդույթը դրանք զանազանում է սովորական (կոշտ) բաղաձայններից՝ համապատասխանաբար «լի» եւ «նի» տառադարձութեամբ (միայն մի այլ ձայնաւորից առաջ, բառավերջին եւ բաղաձայնից առաջ չեն հանդիպում)¹⁹: Այս հնչիւնակապակցութիւնները որոշ դէպքերում ծագում են հին «li» եւ «ni» ձեւերից, մի բան որ ամրապնդում է առաջարկած տառադարձումը:

Օրինակներ իտալերէն. Modigliani Մոդիլիանի, Togliatti Տոլիատի, Cagliari Կալիարի, Battipaglia Բատիպալիա, Bologna (յատ. Bologna) Բոլոնիա, Emilia-Romagna (յատ. Aemilia-Romania) Եմիլիա-Ռոմանիա, Signorelli Սինիորելի, Campagnola Կամպանիոլա: Սակայն, երբ «gli» եւ «gn» համակցութիւնները գալիս են «ի»ից առաջ, բնականաբար գրում ենք միայն մէկ «ի». Baglivi Բալիւի, Fogli Ֆոլի, Fognini Ֆոնինի, Guadagni Գուադանի, Cotogni Կոտոնի:

Օրինակներ սպաներէն. Sevilla Սելիլիա, Allende Ալիենդէ, Castellón Կաստելիոն, Valladolid Վալիադոլիդ, La Coruña Լա Կորու-

19 «Lj» եւ «lj» տառադարձութիւնները սովետահայերէն եւ իտալի:

նիա, Nariño Նարիմիո, Manuel Azaña Ասանիա, «ի»ից առաջ՝ Estrellita Castro Եստրելիտա, Cuautitlán Izcalli Կուաուտիտլան Իսկալի, Níco Rojas Նիկո Ռոխաս, Niquén Նիկեն:

Հարկ է նշել, որ սպանախոս ոչ բոլոր երկրներում են հընչեցնում քմային «ll»-ն, չատերը (մասնաւորապէս Լատինական Ամերիկայում) այն վերածել են պարզ [j]ի: Սակայն մեր տառադարձութիւնը դա չի արտայայտում: Օրինակ՝ ուրուգուայցի դերասանուհի China Zorrilla-ի ազգանունը հնչում է [սորիլա], սակայն տառադարձում ենք Սորիլիա:

ժգ) Սպաներէնի «j» եւ «x» տառերը

Հին սպաներէնում «x» տառը հնչում էր [չ], իսկ «j» տառը՝ [ժ]: ԺԵ. դարում «j»-ն խլացաւ եւ դարձաւ [չ], եւ երկուսը միասին յաջորդ՝ ԺԶ. դարում դարձան [խ]: Այդ է պատճառը, որ օրինակ՝ «jefe» բառը (Ֆրանս. «chef»-ից՝ շեֆ) այսօր հնչում է [խեֆե]: Don Quijote (հին գրութեամբ՝ Don Quixote) այսօր հնչում է [դոն կիխոտե], սակայն ժամանակին՝ [դոն կիշոտե], որից էլ Ֆրանսերէն Don Quichotte, իտալերէն՝ Don Chisciotte, հայերէն՝ Տոն Գիշոթ (Ֆրանսերէնից): Հայերէն (ուսուերէնից) ունենք նաեւ Դոն Կիխոտ ձեւը:

Այդպիսի մի երկընտրանք էլ ունենք México երկրի ու քաղաքի անուան շուրջը: Հնում այն հնչում էր [մէշիկո], այսօր՝ [մէխիկո], իսկ անգլերէնի ազդեցութեամբ (կամ պարզապէս՝ լատիներէն «x» տառի ճիշտ հնչումը չիմանալու պատճառով) այսօր ունենք նաեւ «f»-ով ձեւ՝ Մեքսիկա (սրա վերջաւորութիւնը ուսուերէնի ազդեցութիւնն է՝ Мексика, սպաներէնը տարբերութիւն չի դնում քաղաքի եւ երկրի անունների միջեւ):

Մեքսիկայի եւ ԱՄՆի հարաւային մի շարք նահանգների (նախկինում մեքսիկական հողերի) գանազան տեղանունների ու անձնանունների մէջ [խ]ն արտայայտուած է «x» տառով. México Մեխիկո, Pedro Ximénez Խիմենես, Ximena Խիմենա, Mexía Մեխիա, Oaxaca Ո(վ)ախակա, La Axarquía Լա Ախարկիա, Roxas Ռոխաս, Texas (սպաներէն գրում է եւ Tejas) Տեխաս²⁰:

20 Անգլերէնին նուիրուած յօդուածի մէջ (մասն Դ.) յիշատակել էիմք Texas նահանգի անունը: Սպաներէնը պարզորոշ ցոյց է տալիս, որ դա Տեխաս է եւ ոչ թէ Թեխաս/Տեխաս:

«X» տառը երբեմն արտայայտում է հին հնչիւնը՝ [ɣ], մանաւանդ լատինամերիկեան երկրների տեղական՝ հնդկացիական լեզուների անունների մէջ. Xelajú Շելախու, Xela Շելա:

Տառադարձողն ուրեմն պէտք է աչալուրջ լինի ճիշտ ձեւն ընտրելու համար:

Ժդ) Իտալերէնի áյմնէղ եւ խուլ «s»-երը

Իտալերէնում «s» տառը ձայնաւորների միջեւ եւ ձայնեղ բաղաձայններից առաջ հնչում է ձայնեղ՝ [q]: Այլուր խուլ է՝ [u]: Ձայնեղները սովորաբար տառադարձում ենք «զ», իսկ խուլերը՝ «ս»: Սակայն միշտ չէ որ ձայնեղը տեղին է, երբեմն գերադասելի է տառը տեսնել իր ստուգաբանական (պատմական) ձեւով՝ «ս»: Յիշեցնենք, որ լատիներէն բոլոր «s»-երը տառադարձում ենք «ս» (տե՛ս յօդուածաշարքի Բ. մասը):

Օրինակներ ձայնեղ հնչման. Casanova Կազանովա, Caruso Կարուզո, Vasari Վազարի, Cesare Չեզարէ (իբրեւ անձնանուն), Cesena Չեզենա, Pisa Պիզա, Elisa Ելիզա, Lampedusa Լամպեդուզա, Susanna Սուզաննա, Sofonisba Սոֆոնիզբա (հնարաւոր է եւ Սոֆոնիսբա), Erasmo da Narni Երազմո, Antonio Rosmini Ռոզմինի:

Օրինակներ խուլ հնչման. Stefano Ստեֆանո, Stradivari Ստրադիւարի, Caspanello Կասպանելո, Sesto San Giovanni Սեստո Սան Զովան(ն)ի, Marsala Մարսալա, Savonarola Սաւոնարոլա:

Basilicata անուան մէջ հնչումը ձայնեղ է, բայց մենք կը նախընտրէինք խուլ տառադարձութիւն՝ Բաաիլիկատա, քանզի անուան մէջ նկատելի է յունարէն «բասիլ» արմատը: Խնդիրը արժանի է քննութեան:

Ժե) Սպաներէնի áյմնէղ եւ խուլ «s»-երը

Ինչ վերաբերում է սպաներէնին, ապա «s» տառի ձայնեղ հնչումը հազուադէպ է եւ զուտ դիրքային (ձայնեղից առաջ): Սպաներէնի հնչիւնաբանութիւնը (ի տարբերութիւն իտալերէնի) այն չի բնորոշում իբրեւ առանձին հնչոյթ: Ուստի աւանդոյթ է սպաներէնի բոլոր «s»-երը հայերէն տառադարձել միայն «ս»ով: Օրինակ՝ Coslada, David Bisbal անունների մէջ «s» տառը հնչում է [q], սակայն տառադարձում ենք Կոսլադա, Բիսբալ:

Ժզ) Խալերէնի ձայնն էլ խուլ «z»-ը

Հատինական (աւելի ճիշտ՝ յունական ծագման) «z» տառը իտալերէն ունի երկու հնչում (ձայնն էլ եւ խուլ), եւ այն համապատասխանաբար տառադարձում ենք «ձ» կամ «ց»:

Օրինակներ ձայնն էլ տառադարձութեան. Zoff Զոֆ, Zola Զոլա, Zeffirelli Զեֆիրելի, Bizzozero Բիզոնէրո, Zita Զիտա, Mazara del Vallo Մաձարա դել Վալո, Catanzaro Կատանձարո կամ Կատանցարո:

Օրինակներ խուլ տառադարձութեան. Abruzzo Աբրուցո, Gorizia Գորիցիա, Cosenza Կոզենցա, Monza Մոնցա, Zarina Ցարինա, Lorenzo Լորենցո, Enzo Ենցո, Donizetti Դոնիցետի, Mazzini Մացինի, Veneziano Վենեցիանո, Luzzasco Luzzaschi Լուցասկո Լուցասկի:

Ժէ) Լատիներէն «h» տառը իտալերէնում եւ սպաներէնում

Հատինական «H» տառը իտալերէն գործածում են միայն «che, chi, ghe, ghi» համակցութիւնների (եւ օտար բառերի) մէջ: Իտալերէնի ուղղագրութիւնն այն ջնջել է ստուգաբանական գրեթէ բոլոր դիրքերում՝ Ercolano (լատ. Herculaneum), Enrico Հենրիկ, Ettore Էտտոր, Onorio (լատ. Honorius):

Սպաներէն այն այսօր բոլորովին համը է, սակայն ուղղագրութիւնը պահպանել է «H»-ի գրութիւնը (հնում հնչում էր [h]), որ շատ ու շատ դէպքերում ունի ոչ թէ լատիներէն «H»-ի, այլ «F»-ի ստուգաբանութիւն²¹: Տառադարձութիւնը այն երբեմն պահում է, եւ մենք էլ կ'առաջարկէինք, անունների ստուգաբանական տեսքը պահպանելու, ինչպէս նաեւ հայերէնի գրութիւնը դիւրացնելու համար, հայերէնում նախընտրաբար գրել այդ «h» տառը:

Օրինակներ (սպաներէն). Honduras Հոնդուրաս, La Habana Հաւանա, hidalgo հիդալգո (հմտ. պորտուգալերէն fidalgo), Hernando Հերնանդո (կայ նաեւ Fernando Ֆերնանդո), Horacio Quiroga Հորասիո, Hernán Cortés Հերնան: Սակայն միւս կողմից՝ աւելի ճիշտ կը լինէին. Huila Վիլա (քան թէ Հուիլա), Huelva Վելուա (քան թէ Հուելուա), Huesca Վեսկա (քան թէ Հուեսկա): Վերջիներիս մէջ «h» տառը ստուգաբանական չէ:

21 Հետաքրքրական է, որ հիմ հայերէնում իրանական /ֆ/ հնչիւնը նոյնպէս յաճախ արտայայտուած է եղել /h/ հնչիւնով՝ հրաման, հրապարակ:

Իտալերէն թերեւս անհարկի կը լինէր աւելացնել այդ «h»ն. տառադարձողը ղժուար թէ կարողանայ ամէն պարագայում գուշակել թէ պատմականօրէն այնտեղ «h» եղել է, թէ՛ ոչ:

ԺՐ) Երկհնչիւն «qu»ն

*Ինչպէս նշել ենք լատիներէնին նուիրուած յօդուածում (տե՛ս մասն Բ. դասական լեզուներ), լատիներէնի «QV/QU» հըն-
չիւնագոյգը (միշտ մի այլ ձայնաւորից առաջ) տառադարձում
ենք «fn»։ այդպիսին է հայերէնի դասական աւանդական տառա-
դարձութիւնը։ Տրամաբանութիւնը մի կողմից յուշում է նոյնը
պահել եւ իտալերէնի ու սպաներէնի համար։ Սակայն, մի կող-
մից՝ նոր լեզուների արտասանութիւնը յստակօրէն [կու] է, միւս
կողմից՝ սպաներէնի ուղղագրութիւնը դրանք այսօր գրում է
«cu», եւ տառադարձողը միշտ չէ որ կարող է անխափան որոշել
դրա ծագումը։ Ուստի՝ կարծում ենք, որ աւելի յարմար է գրել
«կու»։ Քննելի հարց է, անշուշտ:*

*Օրինակներ իտալերէն. Pasquale Պասկուալէ, Cinquetti Չին-
կուէտի, Quirico Filopanti Կուիրիկո, Quarenghi Կուարենգի / Քուա-
րենգի, սակայն Quartu Sant'Elena կը նախընտրէինք Քուարտու Սան-
տ'Ելենա, L'Aquila Ա.ֆուիլա (վերջինս առանց որոշեալ յօդի՝ լատի-
ներէնից):*

*Սպաներէն ունենք. Cuenca Կուենկա, Cuautla Կուաւտլա, Cuen-
navaca Կուէրնաւակա, Ernesto Lecuona Լէկուոնա:*

ԺԲ) Սպաներէնի կրկնակ (կոշտ) «rr»ն

*Ինչպէս միշտ ասել ենք, օտար [r] հնչոյթը, կենդանի որ-
պիսի հնչում էլ նա ունենայ այս կամ այն լեզուում, նոր լեզուներ-
ից տառադարձում ենք ամէնուրեք «rr» (բառասկզբին՝ «n»):
Սպաներէնը ճանաչում է երկու [r] հնչիւն, մէկը՝ կոշտ, միւսը՝
փափուկ, եւ հրապուրիչ կարող էր թուալ տարագանել այդ եր-
կուսը։ Սակայն քանի որ ստուգաբանութիւնը դրանք չի զանա-
գանում եւ տառադարձութեան աւանդոյթն էլ արտայայտուած
չէ, գերադասելի է զանց առնել այդ նրբութիւնն ընդհանրապէս
(այն պահելով միայն բացառիկ դէպքերի համար, օրինակ՝ pero
«պէրո» / perro «պէրո»)։ Յատուկ անունների մէջ այն իմաստորոշ
դեր չի խաղում, եւ «rr»ն լիովին բաւարար է:*

Օրինակներ. Tarragona Տարագոնա, Navarra Նավար(ա), Corrientes Կորիենտես, Monterrey Մոնտերէ, Guerrero Գերրերո, Barbara Carrera Կարերա, Barranquilla Բարանկիլիա, Dolores Ibárruri Իբարուրի, Montserrat Caballé Մոնսերատ²² Կարալիէ, Buenaventura Durruti Դուրուտի:

ի) Լատինամերիկեան տեղական զանազան արտասանութիւններ

Լատինական Ամերիկայի զանազան երկրներում սպաներէնը տարբեր արտայայտումներ ու նրբութիւններ ունի: Դրանցից նը- չենք եւս մի քանիսը:

Ձայնաւորից առաջ [j] հնչիւնը կարող է հնչել փափուկ [ɟ] կամ [ɟ̞]. yo, ya, yelmo, ayuno: [ɥ] հնչիւնը կարող է հնչել [h] (Կենտրոնական Ամերիկայում) կամ չափ փափուկ [ɥ̞] (Չիլիում, Պերուում): [ʧ]ն կարող է դառնալ [ʧ̞] եւ այլն:

Հայերէնի տառադարձութիւնը զանց է առնում այդ իւրա- յատկութիւնները, եւ անունները սովորաբար տառադարձում ենք համասպանական գրական արտասանութեամբ, թէեւ, ինչ խօսք, չենք բացառում երբեմն տեղական արտասանութեամբ տառա- դարձութիւններ:

իա) Գոյական անունների ձայնաւոր վերջաւորութիւնները

Իտալերէն ու սպաներէն անունները լատիներէնից ժառան- գել են գոյականների ու ածականների այնպիսի հոլովներ, որոնց մէջ բառերի վերջաւորութիւնները յաճախ ունեն «o, a, e» ձայնա-ւորները: Սրանք, ինչպէս եւ հասկանալի է, արմատի մասը չեն, եւ պատմական տառադարձութիւնը երբեմն դրանք դուրս է նե-տել: Այսպէս՝ ունենք իտալ. Milano (Միլան, լատիներէն՝ Mediola-num), ֆրանս., անգլ. Milan, սպան. Milán, ռուս. Милан, նոյնիսկ տեղական բարբառով՝ Milan: Նմանապէս՝ իտալ. Torino, այլ լեզու-ներով՝ Turin Թուրին, Roma Հռոմ, Vaticano Վատիկան, Parma «Պար-մի մեմաստանը» (Ստենդալի երկի վերնագրի մէջ²³): Իտալական տեղանուններից ֆրանսերէնն ունի Rome, Palerme, Bologne, Floren-ce, Vérone, Messine, Parme, Modène եւ բազում այլ անուններ, որ-

22 Առաջին «t»ն չի հնչում:

23 Թարգմանիչը պահել է ֆրանսերէն *Parme* ձևը:

տեղ ձայնաւոր վերջաւորութիւնները դուրս են ընկել: Սպանական տեղանուններից Ֆրանսերէնն ունի Barcelone, Tolède, Valence, Grenade, Séville, Salamanque, Carthagène եւ այլ ձեւերը:

Արդ՝ պէ՞տք են արդեօք քերականական սեռի այդ «ո, ա, է» վերջաւորութիւնները հայերէն տարբերակների մէջ: Կարո՞ղ է հայերէնը, Ֆրանսերէնի նմանութեամբ, ազատուել այդ «աւելորդ» բռնից: Որքա՛ն աւելի հայահնչուն կը լինէին անունները օրինակ հետեւեալ կերպ. Խտալիայում՝ Տոսկան, Վերոն, Մեսին, Մոդեն, Բերգամ, Կրեմոն, Գալարատ, Սպանիայում՝ Բարսելոն, Տոլեդ, Վալենս, Գրամադ, Սելիլ (հմմտ. «Սելիլեան սափրիչ»²⁴), Սալամանկ:

Argentina անունը արեւելահայերէնը գրում է Արգենտինա (ռուսերէնից), արեւմտահայերէնը՝ Արժանթին (ֆրանսերէնից՝ Argentine, անգլ. նախկինում ասում էին the Argentine): Մենք գտնում ենք, որ «գ»ով գրութիւնը ճիշտ է՝ սերում է լատիներէնից²⁵, եւ որ հայեցի լաւագոյն տառադարձութիւնը կը լինէր Արգենտին (առանց «ա» վերջաւորութեան):

Նշած վերջաւորութիւնները հետեւողականօրէն դուրս նետելը, հասկանալի է՝ հնարաւոր չէ (Ջելա, Մասա, Աչերա, Ռովիգո, Կիետի՝ քիչ յայտնի անունների մեծ մասը), սակայն կարծում ենք որ դա ցանկալի կը լինէր այնտեղ, որտեղ կարելի է (մասնաւորապէս հանրայայտ անունների մէջ), քանի որ անուան հայերէն «պատկերը» դրանից աւելի կը շահէր:

Արժէ խորհել:

իբ) Խտալերէնում եւ սպաներէնում «օտար» տառեր

Լատինական այբուբենի ոչ բոլոր տառերն են գործածելի այսօր իտալերէնում եւ սպաներէնում: Խտալերէնը «j, k, w, x, y» տառերը համարում է օտար եւ գործածում միայն օտար (նաեւ իտալական՝ հնուց այդպէս ուղղագրած) անունների մէջ: Հարկ է յիշել, որ դասական լատիներէնը «X, Y» տառերը գործածում էր միայն յունարէն բառերի մէջ, «K» տառը գրեթէ անգործածելի

24 «Սելիլեան սափրիչ» ձեւը ամենայն հաւանականութեամբ սովետահայերէն է՝ ռուսերէնի «Севильский парикмахер» ածականի բառացի թարգմանութեամբ: Հայերէնը պէտք է ասի «Սելիլիացի սափրիչը»:

25 Երկրի անունն ինքը աւելի շուտ իտալերէն է քան սպաներէն:

էր, իսկ «J, W» տառերը Շւրոպայում ստեղծուել են միայն Վերածննդից յետոյ: Այնպէս որ զարմանալի չէ որ իտալերէնը այսօր հեռու է մնում դրանցից:

Սպաներէնը օտար է համարում «k, w» տառերը: Նոյն տրամաբանութեամբ՝ դրանով գրուում են սկզբունքօրէն միայն օտար անունները (անգլերէն, գերմաներէն եւ այլն): Սպանական պատմական անուններից յիշենք Wamba (վեստգոթացի թագաւոր) Վամբա, որ սպաներէն այսօր հնչում է [բամբա]:

Հատինամերիկեան հնդկացիական եւ Սպանիայի զանազան տեղական անունները տառադարձելու համար սպաներէնը գործածում է նաեւ «tx» [չ] եւ «tz» [ց] համակցութիւնները. Montxo Armendáriz Մոնչո, Arantxa Sánchez Vicario Արանչա, Pátzcuaro Պացկուարո, Coatzacoalcos Կո(հ/վ)ացակո(հ/վ)ալկոս (յօրանջը գոցելու համար հայերէն այստեղ կարող ենք գրել կա՛մ «h», կա՛մ «վ»), Apatzingán Ապացինգան:

իգ) Կրկնակ բաղաձայնների տառադարձումը

Իտալերէնի ու սպաներէնի (ինչպէս եւ որեւէ այլ օտար լեզուի) կրկնակ բաղաձայնները հայերէն գերադասելի է արտայայտել մէկ բաղաձայնով՝ օտար լեզուներում դրանք հնչեն մէկ (կարճ), թէ երկու (երկայն) ձայնով: Արդի սպաներէնն ինքն է խոսափում կրկնակ բաղաձայն գրելուց, օր.՝ gramática, chófer, colega, congreso, túnel:

Իտալերէնն ընդհակառակը՝ սիրում է կրկնակ բաղաձայնները ոչ միայն գրութեան, այլեւ արտասանութեան մէջ: Սակայն պէտք չէ զոհ գնալ այդպիսի արտասանութեանը: Բառի հայեցի հնչումը մերժում է կրկնակ բաղաձայնները:

Օրինակներ իտալերէն. Giacobbe Զակոբէ (Յակոբ), Giuseppe Զուզեպէ (Յովսէփ), Riccardo Ռիկարդո, Arlecchino Արլեկինո, Puccini Պուչինի, Taddeo Տադէո (Թադէո), Raffaele Ռաֆայելէ (Ռաֆայել), Correggio Կորեջո, Caravaggio Կարաւաջո, Pirandello Պիրանդելո, Castellammare di Stabia Կաստելամարէ դի Ստաբիա, Corinna Կորինա, Giannini Զանինի, Cannavaro Կանաւարո, Peppino Պեպինո, Cappuccilli Կապուչիլի, Borromini Բորոմինի, Ferrari Ֆերարի, Vittorio Վիտորիո, Battista Բատիստա, burattino բուրատինո, Mazzola Մացոլա, Bizzozero Բիզոնէրո:

Սակաւ օրինակներ սպաներէնից. Federico Luppi Լուպի, Lionel Messi Մէսի: Այս անձնանունները յաճախ օտար ծագման են,

ինչպես օրինակ ոտնագնդորդի անունը (իտալական): Սպաներենը ինքն է պարզեցնում կրկնակ բաղաձայնները: Messi հնչում է [մե-սի], մէկ [ս]ով: Յաւայի է որ պաշտօնական հայերէնը հաշուի չի առնում այդ հանգամանքը եւ շարունակում է հետեւել ռուսերէնի օրինակին:

իդ) Հիմ (լատինական) անունների տառադարձումը

Հեղինակիս համար՝ անունների հնուց աւանդուած ձեւերը գերադասելի են նոր ձեւերի համեմատ: Եթէ հայերէնում ունենք վաղուց հաստատուած լատինական տառադարձութիւններ կամ թարգմանութիւններ, ապա դրանք ի չիք են դարձնում տառադարձումը խալերէնից կամ սպաներէնից: Հռոմ, Սիկիլիա, Կեսար, Օգոստոս, Ներոն, Կիկերոն, Յուստինիանոս եւ պատմական բոլոր տեղանուններն ու անձնանունները ընդհուպ մինչեւ վաղ միջին դարերից աւանդուածները գրում ենք լատինական ձեւերով:

Իտալիայի զանազան գաւառների ու քաղաքների անունները հնուց եկած ժառանգութիւն են եւ շատ դէպքերում աւելի ճիշտ կը լինի դրանք կա՛մ լատիներէնից տառադարձել, կա՛մ լիովին հայացնել. օրինակ՝ լատ. Florentia (իտալ. Firenze) Ֆլորենտիա, լատ. Syracusae (իտալ. Siracusa) Սիրակուս (առանց յունալատիներէնի յոգնակի վերջաւորութեան), լատ. Apulia (իտալ. Puglia) Ապուլիա, լատ. Latium (իտալ. Lazio) Լատինոն (կարող էինք միանգամայն հայադարձել՝ Լատիֆ, իմա՝ լատին ցեղի բնիկ երկիրը), լատ. Pedemontium (իտալ. Piemonte) Պեդեմոնտ (դուրս ենք նետում լատիներէնի «ium» վերջաւորութիւնը)²⁶, լատ. Sardinia (իտալ. Sardegna) Սարդինիա, լատ. Sicilia (իտալ. Sicilia՝ [չ] հնչիւնով) Սիկիլիա (յունալատինական հնչումով), լատ. Venetia (իտալ. Veneto) Վենետիա (գաւառի անունը):

Այստեղ կ'ուզենայինք անդրադառնալ մասնաւորապէս իտալական Napoli քաղաքի անուանը. իտալերէն՝ Napoli, նոր յունարէն՝ Νάπολη [նա՛պոլի], թուրք. Napoli, որոնցից եւ՝ արեւմտահայերէն Նափոլի: Տեղական («նապոլիտանական»²⁷) բարբառով՝ Na-

26 Տե՛ս յօդուածաշարֆի Բ. մասը՝ հիմ յունարէն եւ լատինարէն:

27 Այս ածականը տեղանուն յունարէն-իտալերէն ածանցեալ արմատների վրայ է շինած՝ «նապոլի-տ-ան-ական» («տ» յունարէնից, «ան»ը՝ իտալերէնից):

pule [նա'պուլը, նա'պըլը], որից՝ *Փրանս*. Naples [նապլ(ը)]: *Պերմ*. Neapel [նեա'փլ], լեհ. Neapol, որից՝ *ռուս*. Неаполь, որից եւ՝ սովեթական շրջաններին նեապոլ:

Անունը հին յունարենից է՝ Νεάπολις (նորաքաղաք): Հայերեն կամ պէտք է առնենք այս ձեւը՝ Նեապոլիս, կամ իտալական նոր ձեւը՝ Նապոլի, կամ էլ երկուսի խառնուրդը՝ Նապոլիս:

«Պոլիս» վերջաւորութեամբ այլ տեղանունների հետ համեմատութիւնը ցոյց է տալիս, որ իտալերէնը հետեւողականօրէն ջնջում է վերջին «s» տառը. Costantinopoli, Adrianopoli, Sebastopoli, Tripoli, Ierapoli, Persepoli, Alessandropoli: Արդ՝ հարց է ծագում՝ հետեւենք իտալերէնի²⁸, թէ՞ ընդունենք հին յունարէն ձեւը: Մեզ համար, ինչպէս նշել ենք յօդուածաշարքիս Բ. մասում, վէճի պարագայում հին յունարէնը առաջնային է, նոյնիսկ լատիներէնի համեմատութեամբ²⁸: Ուստի մենք հակուած ենք Նեապոլիս ձեւին: Սա ընդունելի է ե՛ւ արեւմտահայերէն, ե՛ւ արեւելահայերէն: Այլ լեզուներ էլ կան, որ պահպանել են վերջին «s» տառը. Սպաներէն եւ պորտուգալերէն Nápoles, կատալներէն Nàpols: Այնպէս որ հայերէնի «Նեապոլիս»ը արտառոց չէ:

իե) Թարգմանութիւն, հայադարձում

Ինչպէս եւ ամէն օտար լեզուի պարագայում, հնարաւոր եւ նախընտրելի ենք համարում աշխարհագրական անունների այս կամ այն մասնիկների թարգմանութիւն (դա գուցէ պէտք է անել ամէն հնարաւոր պարագայում): Կարելի է թարգմանել յաճախ հանդիպող այլեւայլ ածականներ. հին, նոր, վերին, ներքին, մեծ, փոքր, սուրբ եւ այլն:

Օրինակներ. Nuevo México Նոր Մեքսիկա (ԱՄՆ նահանգ), Gran Concepción Մեծ Կոնսեպսիոն (Չիլիի մի քանի քաղաքներ միաւորող համայնք է, որի մէջ է եւ Կոնսեպսիոն անունը կրող քաղաքը), Baja California Ներքին²⁹ (Ստորին) Կալիֆորնիա (Մեքսի-

28 Առաւել եւս որ քաղաքը յոյներն են հիմնադրել եւ իրենց լեզուով կոչել:

29 Հայերէն աշխարհագրական «ներքին» ածականը նշանակում է ցածր վայրում գտնուող (եւ ոչ թէ ինչ-որ բանի ներսում): Ներքին կամ Ստորին Կալիֆորնիան այդպէս է կոչում ի տարբերութիւն բուն Կալիֆորնիայի (ԱՄՆ նահանգ), որ առաջ կոչում էին «վերին», այն է՝ դէպի լեռները գնացող:

կայի նահանգ), Santiago de Compostela (Ֆրանս. Saint-Jacques-de-Compostelle) Սուրբ-Յակոբոս-Կոմպոստել:

«Palma de Mallorca»-ն կարող ենք «թարգմանել» Մալիորկայի (Մալիորկայի) Պալմա, ի տարբերություն աշխարհի զանազան այլ Պալմաների: Լատիներեն «Majorica»-ն (կղզու անունը) հայերեն կը տար Մալիորիկ(ա): Երբեմն պէտք է համարձակութիւն ունենալ եւ նախընտրել անունների հայեցի տեսքը:

Անդոր(ր)այի Andorra la Vella մայրաքաղաքի անունը (կատալոներեն «vella» նշանակում է «ֆաղաֆ»), կարող ենք թարգմանել «Անդորա ֆաղաֆ»՝ հասկանալի կերպով տարբերելով երկրի եւ մայրաքաղաքի անունները (քան թէ՛ ոչինչ ասող Անդորա-լա-Վելիա):

իզ) Շեշտադրութիւն

Շեշտադրութիւնը կարեւոր հանգամանք է ոչ միայն տառադարձութեան, այլեւ հայերէնի ուղղախօսութեան համար: Այսօր հայաստանցի եւ սփիւռքահայ բազմաթիւ հայեր օտար շատ անուններ արտասանում են ոչ թէ ինչպէս դրանք գրած են տեսնում հայերէն, այլ օտար հնչումներով (թէեւ հայերէն այդպէս երբեք չենք գրում): Դիցուք՝ Նեապոլ (սովետահայ ուղղագրութեամբ՝ Նեապոլ). թւում է թէ ինչ դժուար բան կայ այն արտասանելու՝ [նե-ա-պոլ], երեք վանկ, չեշտը՝ վերջին վանկի վրայ: Հայաստանցիները (այստեղ բնականաբար ռուսերէնի ազդեցութիւնն է) քաղաքի անունը հնչեցնում են երկու վանկով, չեշտում են առաջին վանկը եւ «ն» ու «լ» տառերը արտասանում փափուկ՝ [ն'ա'-պըլ]:

Խիստ կարեւոր է հայերէն տառերով գրած անունը (ինչպիսի ծագում էլ ունենայ) հայերէն արտասանել նախ՝ այնպէս ինչպէս գրած է, եւ ապա՝ վերջավանկ չեշտով: Հայը չի կարող, եւ պարտաւոր էլ չէ, ամէն անուան դէպքում գուշակել, թէ ուր պէտք է ընկնի օտար չեշտը: Իտալերէն կամ սպաներէն գիտեցող հայը կարող է գիտենալ այդ լեզուների չեշտերի տեղերը, բայց չգիտէ չինարէնիւնը կամ հնդկերէնիւնը, անգլիախօս հայը կարող է գուշակել անգլերէնի չեշտերը, բայց չգիտէ վրացերէնիւնը կամ արաբերէնիւնը: Վերջին հաշուով հայի փոյթը չէ, թէ ինչպիսին է չեշտադրութիւնը ճապոներէնում, հնդկերէնում կամ աշխարհի միւս լեզուներում: Ոչ մի լեզու չի կարող հարազատօրէն վերարտադրել աշխարհի բոլոր մնացած լեզուների չեշտադրութիւնը:

Մի՞թէ անգլերէնը յարգում է հայերէնի շեշտերը, մի՞թէ ռուսերէնը յարգում է յունարէնի կամ վրացերէնի շեշտերը: Ո՛չ, եւ չեն էլ կարող, քանզի ամէն լեզու ունի շեշտադրութեան ի՛ր տրամաբանութիւնը:

Հայաստանի Տերմինաբանական կոմիտէն 1957 թուականին որոշել էր «ռուսական եւ օտարագրի (sic!) յատուկ անձնանունների շեշտը հայերէնում նշանակաւոր պահպանել միայն ուղղական ձևում», օրինակ՝ Լեւոնտով, բայց Լեւոնտովի»³⁰: Ինչպիսի՞ միամտութիւն. մի երկու օրինակ են բերել եւ կարծում են թէ հայը դրանով աշխարհի մի քանի հազար լեզուի շեշտադրութեանն է տիրապետելու:

Հայերէնում օտար անունների միակ ճիշտ շեշտադրութիւնը վերջավանկն է: Անհրաժեշտ է յարգել հայոց շեշտադրութիւնը եւ մեր լեզուի կանոնները:

ԱՄՓՈՓՈՒՄ

Տառադարձութիւնը երբեմն անսպասելի տեղեկութիւններ է հաղորդում: Բոլորիս յայտնի է հանրահաշուական անյայտ մեծութիւն նշանակող «x» տառը: Այն ամենայն հաւանականութեամբ գալիս է լատինական տառի հին սպաներէն հնչումից՝ [x], որ արաբերէն «ش» (շիմ) տառի համարժեքն էր³¹: Վերջինս արաբերէն «شي» [շայ/շէյ] («բան, մի բան, զինչ ինչ») բառի սկզբնատառն է: Արաբ հաշուագէտները անյայտ մեծութիւնը կոչում էին ուրեմն «մի բան»:

Մեր նախորդ յօդուածների տեսական ամփոփիչ մտքերի մեծ մասը հաւասարապէս վերաբերում է եւ իտալերէնին ու սպաներէնին, եւ այստեղ դրանք չենք կրկնում:

Ճշմարիտ հայերէնը պէտք է հրաժարուի ե՛ւ սովետական տառադարձումից (որ գերիշխում է Հայաստանում), ե՛ւ կիլի-

30 *Տերմինաբանական եւ ուղղագրական տեղեկատու (1956-2006)*, 195: Օրինակները միայն հետեւեալներն են. *Պոլշկին, Լեւոնտով, Մայակո՛վսկի* (երեւ ռուս), եւ *Ձիկոքա՛վա, Ծերեթե՛ղի* (երկու վրացի): Ընդ որում՝ վրացի լեզուաբանի անունը արդէն սխալ է, պէտք է լինէր *Ձի-ժո՛րպա*: Ակնյայտօրէն վրացերէնը անտեսած, ռուսերէնից է տառադարձած ու շեշտադրած:

31 Սպաներէնը միջին դարերում արաբերէնի եւ եւրոպական այլ լեզուների միջնորդն է եղել:

կեան (որ գերիշխում է Սփիւռքի արեւմտահայաստան գաղութներում ու դասական ուղղագրութեան հայաստանաբնակ հետեւորդների շրջանակներում):

Տառադարձութիւնը, ինչպէս բազմիցս նշել ենք, մէկ մարդու գործ չէ, եւ ազգովին ընդունելի տառադարձութիւն մշակելու համար պետական ու գիտական հաստատութիւնները իրենց մասնակցութիւնը պէտք է ունենան:

Յուսով ենք՝ հեռու չեն այն օրերը, որ Հայաստանում ի յայտ կը գան հայկաբան մասնագէտներ, որոնք եւ իրենց գիտելիքը ի սպաս կը դնեն տառադարձութեան եւ մեր լեզուի համաձուլման կարեւոր գործին:

Մեր դատողութիւնները առաւել եւս նրանց ենք ուղղում:

ՅԱԻԵԼՈՒԱԾ – ԱՂԻԻՍԱԿ ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ

Ծնթ. Կլոր փակագծերի մէջ աւելի հազուադէպ հանդիպող տարբերակներն են: Թեք գիծը (/) բաժանում է (հայերէնի պարագայում) ըստ դիրքի տառադարձութեան տարբերակները: Ստորակէտով բաժանած են գրութեան ձեւերը կամ (հայերէնի պարագայում) տառադարձութեան հնարաւոր տարբերակները:

լատիներէն	իտալերէն	սպաներէն	լատիներէնի տառադարձումը	իտալերէնի տառադարձումը	սպաներէնի տառադարձումը
A	a	a	ա		
B	b	b	բ		
C	c	c	կ		
D	d	d	դ		
E	e	e	ե/է		
F	f	f	ֆ		
G	g	g	գ		
H	h	h	h	-, (h)	
I	i	i	ի, j	ի, j	ի, j
J	j (օտար)	j	j/ի	-	իս
K	k (օտար)	k (օտար)	կ		

լատիներէն	իտալերէն	սպաներէն	լատիներէնի տառադարձումը	իտալերէնի տառադարձումը	սպաներէնի տառադարձումը
L	l	l	լ, (ղ)	լ	
M	m	m	մ		
N	n	n	ն		
O	o	o	ո		
P	p	p	պ		
Q(u)	q(u)	q(u)	f(nւ)	կ(nւ)	կ(ե), կ(ի)
R	r	r	ր/ռ		
S	s	s	ս	ս, զ	ս
T	t	t	տ		
U	u	u	ու		
V	v	v	վ/ւ/ու		
W	w (օտար)	w (օտար)	-	վ/ւ/ու	
X	x (օտար)	x	ֆս	-	ֆս (կս), ս
Y	y (օտար)	y	ի, իւ	-	յ, ի
Z	z	z	զ, (ճ)	ճ, ց	ս
CE, CI	ce, ci	ce, ci	կե, կի	չե, չի	սե, սի
GE, GI	ge, gi	ge, gi	գե, գի	ջե, ջի	իե, իի
—	che, chi	que, qui	-	կե, կի	
—	ghe, ghi	gue, gui	-	գե, գի	
—	sce, sci	—	-	շե, շի	-
—	gli	ll	-	լի	
—	gn	ñ	-	նի	
—	—	ch	-	-	չ
AU	au	au	աւ		
EU	eu	eu	եւ		
AE	e	e	է/է		
OE	e	e	է/է		

ԱՐՄԷՆ ՄԻՔԱԷԼԵԱՆ

Résumé

LES PRINCIPES DE LA TRANSLITTÉRATION (TRANSCRIPTION) ARMÉNIENNE DES NOMS PROPRES ÉTRANGERS

VI partie – les langues italienne et espagnole

ARMEN MICHAELIAN

Le présent article fait partie d'une série qui traite de la translittération (transcription) des noms propres étrangers en arménien (de la façon de transcrire les noms étrangers en caractères arméniens). Les références des quatre premières parties déjà parues sont : *The Principles of Transliterating Foreign Proper Names into Armenian, Part I – Middle Eastern Languages* [en arménien], in «*Haigazian Armenological Review*», 40 (2020), pp. 341-364 ; *Les Principes de la translittération arménienne des noms propres étrangers, II partie – langues classiques (grec ancien et latin)* [en arménien], «*Bazmavep*», 178 (2020), N° 1-2, pp. 304-336; *The Principles of Transliterating Foreign Proper Names into Armenian, Part III – French Language* [en arménien], «*Haigazian Armenological Review*», 41 (2021), pp. 443-466 ; *Les Principes de la translittération arménienne des noms propres étrangers, IV partie – la langue anglaise* [en arménien], «*Handes Amsorya*», 135 (2021), pp. 197-246; *Les Principes de la translittération arménienne des noms propres étrangers, V partie – la langue allemande* [en arménien], «*Bazmavep*», 180 (2022), N° 1-2, pp. 273-299.

La sixième, présente partie de la série est consacrée à la translittération (transcription) des noms propres des langues italienne et espagnole. Le principe de la translittération est basé (comme dans toute la série) sur l'orthographe classique de l'arménien en écartant rigoureusement la translittération « cilicienne » d'un côté et la « soviétique » de l'autre. Après un rappel des principes phonologiques et orthographiques de la translittération arménienne évoqués dans les premiers articles de la série, l'auteur passe au crible les sons et les phonèmes italiens et espagnols les plus problématiques et propose (en s'appuyant sur de nombreux exemples) une translittération de principe pour chacun d'entre eux.

La série d'articles va continuer avec d'autres langues importantes, comme le russe, le hindi, le chinois, le japonais etc.